ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/27 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
11	ԳՆՈՄՈՆ	ԳՆՈՄՈՆ	Երևանի Ոսկերչական գործարան-1 ԳՆՈՄՈՆ ԲԲԸ	Կրծքանշանն իրենից ներկայացնում է օվա¬լաձև՝ ուռուցիկ մակերեսով շրջանակ, ընդհանուր ֆոնը՝ սպիտակ: Կրծքանշանի երկա¬րությունը 60 մմ է, իսկ միջնամասի լայնությունը՝ 45 մմ: Կրծքանշանի վերին հատվածի կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրա¬պետության զինանշանը, իսկ ներքևի հատվածում՝ կենտրոնում, պատկերված է Հայաստանի Հանրա-պետության դրոշը: Կրծքանշանը եզրագծված է 10 մմ լայնությամբ ոսկե¬գույն դափ¬նեպսակով: Կրծքանշանի միջնա¬մա¬սում՝ ամբողջ լայնությամբ (ձախից աջ) պատկերված է Հայաս¬տանի Հանրա¬պետության ծածանվող դրոշը: Կրծքանշանի կենտրոնում՝ դրոշի վրա, 30 մմ տրամագծով կապույտ ֆոնի վրա պատկերված է շրջանակ: Շրջանակի եզրագծով՝ վերևի հատվածում, գրված են «MES

				ARMENIA», ներքևի հատվածում՝ «RESCUER OF INTERNATIONAL CLASS» բառերը: Շրջանակի կենտ¬րոնում գտնվող 20 մմ տրամագիծ ունեցող երկրագունդը խորհրդանշող կապույտ շրջանակում զետեղված է նախարա-րության խորհրդանիշը: Կրծքանշանի դարձերեսին հորիզոնական մեկ տողով գրված է «ՀՀ ԱԻՆ MES RA» բառերը և լազերային եղանակով դաջվում է կրծքանշանի հերթական համարը /սկսած 0080-ից/: Կրծքանշանը դարձերեսի կողմից ունի պտուտակային ամրակ՝ հագուստին ամրացնելու համար: Կրծքանշանի արտաքին տեսքը պետք է համապատասխանի համաձայնեցված նմուշի արտաքին տեսքին: Թվային տեխնոլոգիաների կիրառմամբ դրոշման եղանակը ապահովում է կրծքանշաների բարձր որակը և ճշգրիտ չափսերը: Ցանկացած երկու կրծքանշանի չափսերի շեղումը պետք է լինի ոչ ավել քան 0.1 մմ: Պատրաստի կրծքանշանի վրա չի թույլատրվում ՝ Պատկերների և գրվածքների աղավաղում: Մակերեսի վրա խազեր, քերծվածքներ, այլ հետքեր: Մատակարարը կրծքանշանների նմուշների եռաչափ (3D) մոդելավորված նկարները և հետո նմուշները պետք է նախապես համաձայնեցնի պատվիրատուի հետ: Տուփի արտաքին չափերը հետևյալն են՝ (բարձրություն X լայնություն X երկարություն) 15X60X60մմ: Պատրաստված է ստվարաթղթից, կրծքանշանի արտաքին եզրագծով հարթակով՝ իր ճշգրիտ դիրքավորման համար: Կրծքանշանի հետ տրվում է վկայական (համաձայն հրավերի էսքիզ 10):

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/27 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
11				